<ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում
հինգշաբթի, 10 նոյեմբերի 2022թ., 14:05

Մասնակցեցին՝
Բաժնետերեր
13 բաժնետեր նիստի բացման պահին

Բանկի Խորհուրդ
Գագիկ Զաքարյան (նախագահ)
Գեորգի Պիսկով
Էդուարդ Զամանյան
Հրահատ Արզումանյան
Արտեմ Կոնստանդյան
Վարդան Աթայան

Բանկի Վարչություն
Մեսրոպ Հակոբյան (նախագահ)
Արարատ Ղուկասյան
Օվսաննա Առաքելյան
Գոհար Գրիգորյան
Գուրգեն Ղուկասյան
Դավիթ Պետրոսյան
Արթուր Ապերյան

Հրավիրվածներ
Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բաղդասարյանը:

Աննա Բաղոյանը ներկայացրեց, որ 10.11.2022թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 24.10.2022թ. դրությամբ: Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով տեղադրվել է Բանկի պաշտոնական կայքէջում, հրապարակվել է <Ժողովուրդ> օրաթերթում, ծանուցումները քվեարթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին փոստի միջոցով 25.10.2022թ-ին: Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացրած քվեաթերթիկների ընդունումն ավարտվել է 10.11.2022թ-ին՝ մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 10.11.2022թ-ին:

Ժողովի նահագահ Գագիկ Զաքարյանը բացեց նիստը և ողջունեց բոլոր մասնակիցներին: Նշեց, որ օրակարգում է Բանկի Խորհրդի կազմում փոփոխություններ կատարելու մասին հարցերը, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու համար խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին:

Մեսրոպ Հակոբյանը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Խորհրդի անդամ Դավիթ Փափազյանի դիմումը իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ և հաշվի առնելով Բանկի Խորհրդի առաջարկը Խորհրդի կազմում ընդգրկելու Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտին, գումարվել է Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ Խորհրդի կազմում փոփոխությունները հաստատելու համար:

Մեսրոպ Հակոբյանը նշեց, որ Դավիթ Փափազյանը Խորհրդի անդամի լիազորությունները ստանձնել է 25.05.2017թ. Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի որոշմամբ: Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտի թեկնածությունը առաջադրվել է Խորհրդի կողմից՝ հաշվի առնելով նրա բազմամյա միջազգային փորձը կապիտալի շուկաներում և ներդրումային ոլորտում: Թեկնածուի կենսագրական տվյալները տրամադրվել են Բանկի բաժնետերերին Ժողովի գումարման մասին ծանուցման հետ միասին:

Մեսրոպ Հակոբյանը խոսքը փոխանցեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բաղոյանին՝ ներկայացնելու քվեարկության արդյունքները:

Աննա Բաղոյանը ներկայացրեց, որ Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 172,886,525 հատ, որից քվեարկությանը մասնակցել է ձայնի իրավունք ունեցող 162,287,770 բաժնետոմս, կամ տոկոսային հարաբերությամբ 93,87%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր ճանաչված առկա չեն: Քվորումն ապահովված է:

1. **<Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամ Դավիթ Փափազյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը:**

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի 1-ին հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 161.418.204 ձայն կամ մասնակիցների ձայների 99.46%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 869.566 ձայն կամ մասնակիցների ձայների 0.54%

անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով Ժողովը որոշում ընդունեց վաղաժամկետ դադարեցնել <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամ Դավիթ Փափազյանի լիազորությունները իր դիմումի համաձայն:

2. Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտին <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի անդամ ընտրելու հարցը:

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի 2-րդ հարցի, բաշխվել են հետևյալ կերպ՝

կողմ՝ 161.418.204 ձայն կամ մասնակիցների ձայների 99.46%
դեմ՝ 0 ձայն
ձեռնպահ՝ 869.566 ձայն կամ մասնակիցների ձայների 0.54%
անվավեր՝ 0 ձայն

Քվեարկության արդյունքներով Ժողովը որոշում ընդունեց <Յունիբանկ> ԲԲԸ Խորհրդի կազմում ընդգրկել Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտին:

Գագիկ Զաքարյանը Բանկի Խորհրդի անունից շնորհակալություն հայտնեց Դավիթ Փափազյանին համատեղ աշխատանքի համար և շնորհավորեց Ֆիլիպ Ռենե Մարկ Դելմոտին Խորհրդի անդամ ընտրվելու կապակցությամբ: Համոզմունք հայտնեց, որ նրա հարուստ կենսափորձը և խորը գիտելիքները կուղղվեն Յունիբանկի հետագա զարգացմանը:

Որոշում կայացվեց իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ կապված Բանկի Խորհրդի կազմում փոփոխությունների կատարման հետ:

Աննա Բադոյանը հայտարարեց, որ Ժողովի օրակարգի հարցերը քննարկված են, որոշումներն ընդունված են:

Ժողովի նահագահ Գագիկ Զաքարյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և ավարտեց Բաժնետերերի ժողովը ժամը 14:20-ին:

Գագիկ Զաքարյան **Նախագահ**	**Աննա Բադոյան** **Քարտուղար**

ք. Երևան, 11 նոյեմբերի 2022թ.